

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 31/1

18 հունիսի 2013 թ.

Քննարկվեց Ա/Ձ Արսեն Գևորգյանի 18.05.2013 թ-ի բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 03.05.2013 թ-ի թիվ 2117316 ստուգման ակտի դեմ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ պետի 26.03.2013 թ-ի թիվ 2117316 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Արսեն Գևորգյանի մոտ կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգում, որն ընդգրկել է 04.04.2012 թ-ից մինչև 22.04.2013 թ-ն ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 03.05.2013 թ-ի թիվ 2117316 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 60.000 դրամ:

Ա/Ձ Արսեն Գևորգյանի բողոքում մասնավորապես նշված է.

Գտնում եմ, որ ստուգման ակտը կազմվել է օրենքի պահանջների կոպիտ խախտմամբ և պետք է ճանաչվի անվավեր՝ ստորև բերվող պատճառաբանություններից:

1. Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ-ի պետի 26.03.2013 թ-ի թիվ 2117316 հանձնարարագրի կատարվել է ստուգում՝ ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասությունների սահմաններում ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի առանձին պահանջների կատարման ճշտությունը պարզելու նպատակով: Հարկային մարմնի կողմից խախտվել է ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի ա/ ենթակետը, համաձայն որի ստուգումն իրականացնող անձը (անձինք) պարտավոր է (են)՝ ա) պահպանել ստուգման հետ առնչվող՝ ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները:

2. ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ-ի պետի 26.03.2013թ. թիվ 2117316 հանձնարարագրի մեկ օրինակը օրենքով սահմանված կարգով ինձ չի հանձնվել, ոչ իմ ստորագրությամբ, ոչ էլ փոստով համապատասխան ծանուցմամբ: Այս հանգամանքի առկայությունն արդեն իսկ բավարար պայման է ակտը ոչ իրավաչափ և տեսուչների գործողությունները հակաօրինական ճանաչելու համար:

3. Ստուգման ակտում հիշատակված է, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից իբր խախտվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի պահանջները: Համաձայն նշված իրավական նորմի, աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա:

Բողոքարկվող ակտում նշված քաղաքացի Գուրգեն Առաքելյանի հետ իբր գործատուի կողմից չի կնքվել աշխատանքային պայմանագիր: Սակայն տեղեկացնում եմ, որ ստեղծված իրավիճակում ես գործատու չեմ հանդիսանում, քանի որ քաղաքացի Գուրգեն Առաքելյանն ինձ մոտ անցնում էր պրակտիկա:

Քաղաքացի Գուրգեն Առաքելյանը սովորում է ՀՀ ԿԳՆ <Հրազդանի արհեստագործական պետական ուսումնարան> ՊՈԱԿ-ում <Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում> ավարտական խմբում և ավարտելու է 10.06.2013 թ-ին:

Գուրգեն Առաքելյանն ինձ մոտ անցնում էր պրակտիկա՝ համաձայն իմ և ուսումնական հաստատության միջև 05.03.2013 թ-ին կնքված պայմանագրի: Նշված պայմանագրի մասին ես տեղեկացրել եմ տեսուչներին, սակայն նրանք որևէ ուշադրություն չեն դարձրել այդ հանգամանքին, որի հետևանքով իմ կողմից ներկայացված պայմանագիրը ուսումնասիրության առարկա չի դարձել: Իմ կողմից իրականացված գործողություններում չկա որևէ հանգամանք, ինչը կհիմնավորեր ստուգման ակտով արձանագրված խախտումն իմ կողմից կատարված լինելու փաստը:

Բացի այդ, համաձայն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետի, անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն, եթե սույն հոդվածի 1-ին մասի ա) կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) անձը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ վարչական մարմնի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ վարչական մարմնի վրա:

Այս պարագայում ինձ համար բարենպաստ փաստական հանգամանքը կայանում է նրանում, որ իմ կողմից կատարվել են բոլոր անհրաժեշտ գործողությունները կապված քաղաքացի Գուրգեն Առաքելյանին, որպես պրակտիկանտ ընդունելու հետ: Տվյալ դեպքում նա չէր կարող հանդիսանալ իմ աշխատողը, հետևապես իմ կողմից չի խախտվել աշխատանքային օրենսդրության պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով հիշյալ իրավական նորմերով Ա/Ձ Արսեն Գևորգյանը խնդրում է Հրազդանի ՏՀՏ թիվ 2117316 ակտը ճանաչել անվավեր:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Արսեն Գևորգյանի և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձի ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն <Հրազդանի արհեստագործական պետական ուսումնարան> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատարի 17.05.2013 թ-ի թիվ 94-13 տեղեկանքի, քաղաքացի Գուրգեն Առաքելյանը սովորում է ՀՀ ԿԳՆ <Հրազդանի արհեստագործական պետական ուսումնարան> ՊՈԱԿ-ի <Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում> ավարտական խմբում և ավարտելու է 10.06.2013թ-ին:

Հարկ է նշել, որ <Հրազդանի արհեստագործական պետական ուսումնարան> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատարի և Ա/Ձ Արսեն Գևորգյանի միջև 05.03.2013 թ-ին կնքվել է պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր)՝ <Հրազդանի արհեստագործական պետական ուսումնարան> ՊՈԱԿ-ի տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում խմբի սովորող Գուրգեն Առաքելյանի արտադրական ուսուցումը (պրակտիկան) Ա/Ձ Արսեն Գևորգյանի մոտ անվճար անցկացնելու վերաբերյալ: Պայմանագրի գործունեության ժամկետը սահմանվել է 05.03.2013 թ-ից մինչև 10.06.2013 թ-ը: Ընդ որում, <Հրազդանի արհեստագործական պետական ուսումնարան> ՊՈԱԿ այցելության արդյունքում պարզվել է, որ Պայմանագրի օրինակը առկա է նաև նշված ՊՈԱԿ-ում:

Վերոգրյալ փաստական հանգամանքներից հետևում է, որ <Հրազդանի արհեստագործական պետական ուսումնարան> ՊՈԱԿ-ի տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում խմբի սովորող Գուրգեն Առաքելյանը ստուգման ընթացքում

անվճար հիմունքներով Ա/Ձ Արսեն Գևորգյանի մոտ անց է կացրել արտադրական ուսուցում:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ քննարկվող դեպքում Ա/Ձ Արսեն Գևորգյանը ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի և «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ կետի «ա» ենթակետի պահանջների խախտում չի կատարել:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Յ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 03.05.2013 թ-ի թիվ 2117316 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ